# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- 2024 թվականի ընթացքում վարչության կողմից համապատասխան աշխատանքներ են իրականացվել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի, պետական կառավարման համակարգի մարմինների ու վերջիններիս տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության և փոխհամաձայնեցված գործողությունների ապահովման ուղղությամբ:
- 2024 թվականի ընթացքում հրավիրվել և անցկացվել է մարզի խորհրդի թվով 4 նիստ: Վարչության կողմից պատշաճ կարգով իրականացվել են մարզի խորհրդի նիստերի հրավիրման հետ կապված կազմակերպչական հարցերն ու նիստերի արձանագրումը: Բացի այդ կազմակերպվել և անցկացվել են արտագնա խորհրդակցություններ մարզի բոլոր 6 համայնքներում:
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարությամբ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2024 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն մարզի թվով երեք՝ Աշոցք, Ախուրյան և Անի համայնքներում իրականացվել է տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողություն:
- Վարչության կողմից իրականացվել է ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ առաքված մարզի համայնքների ավագանիների շուրջ 1200 և համայնքների ղեկավարների շուրջ 9 հազար որոշումների իրավաչափության որոշման աշխատանքների համակարգում:
- Միջոցներ են ձեռնարկվել մարզի համայնքներում՝ ավագանու նիստերի առցանց հեռարձակումներն անխափան իրականացնելու, ինչպես նաև համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերի մշտական հասանելիությունն ապահովելու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված բովանդակությամբ համալրելու ուղղությամբ, ինչի նպատակով վարչության աշխատողների կողմից պարբերաբար իրականացվել են մշտադիտարկումներ և արդյունքները երկամսյա կտրվածքով ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

- 2024 թվականի նոյեմբերի 18-20-ը ներառյալ կազմակերպվել և իրականացվել է մարզի տեղական ինքնակառավարման մարմինների թվով 16 ներկայացուցիչների (3 համայնքի ղեկավար, 4 համայնքի ղեկավարի տեղակալ և 9 ավագանու անդամ) վերապատրաստման գործընթացը:
- Համայնքային ծառայողների հերթական վերապատրաստման գործընթացն իրականացվել է 2024 թվականի հուլիսի 8-18-ը և նոյեմբերի 18-28-ը ներառյալ: Ընդհանուր հաշվով, 2024 թվականին վերապատրաստվել է մարզի թվով 5 համայնքների 100 համայնքային ծառայող:
- Մարզպետի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ աշխատանքի արդյունքում 2024 թվականի ընթացքում կազմակերպվել և անցկացվել են մարզի համայնքների աշխատակազմերի համայնքային ծառայության թվով 19 թափուր պաշտոնների համալրման համար հայտարարված մրցույթներ:
- Պարբերական այցելություններ են իրականացվել մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերանորոգվող թվով 500 մանկապարտեզների ծրագրում ընդգրկված ՀՀ Շիրակի մարզի թվով 20 մանկապարտեզներ՝ գույքի մատակարարման հետ կապված աշխատանքներին տեղում ծանոթանալու նպատակով: Պայմանագրերի կատարման արդյունքների վերաբերյալ կազմվել են համապատասխան եզրակացություններ: 15-օրյա պարբերականությամբ ամփոփ տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:
- Ընդունվել և ներկայացված հաշվետվությունների հետ համեմատվել են «Սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում» ծրագրով նախատեսված ՀՀ Շիրակի մարզի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններին տրամադրված դրամաշնորհների շրջանակում մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները:
- Մարզի համայնքապետարանների պատասխանատուներին պարզաբանվել են ՀՀ արտաքին քաղաքականությանը և դիվանագիտությանն առնչվող բոլոր տեսակի միջոցառումներին մասնակցությանն առնչվող հարցերը ՀՀ ԱԳ նախարարության հետ համաձայնեցնելու և սահմանված ընթացակարգերով առաջնորդվելու անհրաժեշտությունը:

Գյումրու համայնքապետարանի աշխատակիցների հետ քննարկվել ու սահմանված ժամկետներում ապահովվել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի և ԵԴԺՀ Դիռե Դավա, Սերբիայի Նովի Սադ, Լեհաստանի Հանրապետության Վրոցլավ քաղաքների միջև համագործակցության և հարաբերություններ հաստատելու գործընթացի կազմակերպման նպատակով համապատասխան դիրքորոշումների ներկայացումը, ինչպես նաև հուշագրերի նախագծերի կազմումն ու անհրաժեշտ փոփոխությունների կատարումը:

- Համապատասխան հսկողություն է սահմանվել մարզային ենթակայության թվով 2 և համայնքային ենթակայության 1 կազմակերպություններում թվով 5 այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնողների և ծառայության կազմակերպման ուղղությամբ:
- Ձեռնարկվել են միջոցներ զոհված և վիրավոր զինծառայողների հարազատների կողմից բարձրացված հարցերի լուծման ուղղությամբ, ինչպես նաև վերջիններիս ցուցաբերվել է անհրաժեշտ խորհրդատվություն:
- Կազմվել և ՀՀ ներքին գործերի նախարարություն է ներկայացվել «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում 2024 թվականի ուսումնական տարում ՀՀ Շիրակի մարզի ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման պլանը:
- ՀՀ Շիրակի մարզում բնակչության պաշտպանության, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների վերացման, պատասխանատու կազմակերպությունների միջև փոխհամագործակցված աշխատանքների ապահովման նպատակով մշակվել են ՀՀ Շիրակի մարզպետի մի շարք որոշումների նախագծեր և ներկայացվել հաստատման:
- Արտակարգ իրավիճակներում ՀՀ Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2024 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզպետի որոշումներով մարզում անցկացվել են շտաբային և ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություններ, որոնց կազմակերպչական աշխատանքների իրականացման գործում ակտիվ ներգրավվածություն են ունեցել վարչության աշխատակիցները:
- 2024 թվականի ընթացքում կազմակերպվել են քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ծառայությունների պետերի և շտաբների պետերի հրամանատարական պատրաստության պարապմունքներ՝ Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության մասնագետների մասնակցությամբ:
- Պարբերական այցելություններ են եղել համայնքներ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2024 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների» ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման հսկողությունն իրականացնելու նպատակով: Կատարված աշխատանքների վերաբերյալ հավաքագրվել է անհրաժեշտ տեղեկատվություն և ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ու ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչություն:

- ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության և ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակի հետ համագործակցված աշխատանքի արդյունքում պատշաճ կարգով իրականացվել է մարզում անցկացված մի շարք հանրային միջոցառումների ժամանակ հասարակական կարգի պահպանությունը և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը:
- Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված և մարզում բնակվող արցախցիների վերաբերյալ վարչության կողմից իրականացվել է պարբերական հաշվառում և համայնքապետարաններից ստացված տվյալները ներառվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ստեղծված առցանց հարթակում:
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարությամբ յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրը տեղեկատվություն է ներկայացվել նախարարություն՝ Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց տրամադրված հումանիտար օգնության, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզ տեղափոխված և պետական ու համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում բնակվող արցախցիների տեղաշարժի վերաբերյալ:
- Վարչության աշխատակիցներն ընդգրկվել են ամենատարբեր գործառույթներ իրականացնելու նպատակով մարզպետի աշխատակազմում ստեղծված աշխատանքային խմբերում:
- Իրականացվել են տարաբնույթ հանձնարարականների ու գրությունների քննարկման, ամփոփման և արդյունքների վերաբերյալ պատասխան գրությունների նախապատրաստման աշխատանքներ:
- Ապահովվել է գաղտնի գործավարությամբ սահմանված ընթացակարգով մի շարք հանձնարարականների կատարումը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՏԿ ԵՎ ՏԻՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐԱՄ ԱՆՏՈՆՅԱՆ